2013 ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ - ՀԱՅԱՍՏԱՆ

Հունիս 2014



ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ՝ 3.9



2013 թվականին Հայաստանում անցկացվեցին նախագահական և Երևան քաղաքի ավագանու ընտրություններ: Նախագահական ընտրություններին հետևեցին ընտրակեղծիքների և ներկա իշխանության դեմ ուղղված զանգվածային բողոքի ակցիաներ: Մեկ ամսից ավել տևած ցույցերից հետո բողոքի թափը թուլացավ: Մեկ այլ նշանակալի իրադարձություն էր ՀՀ նախագահի որոշումը Եվրասիական մաքսային միությանը միանալու մասին, չնայած նրան, որ եվրոպական կառույցների հետ ինտեգրման և Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի ստորագրման ուղղությամբ տարիների աշխատանք էր տարվել:

2013թ. բարելավվեց ՔՀԿ-ների՝ շահերի պաշտպանության գործունեությունը: Այս ոլորտում հատկապես ակտիվ էին ոչ ֆորմալ խմբերը, որոնք ընդդիմացան անբարենպաստ պետական այնպիսի որոշումներին, ինչպիսին էր, օրինակ, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ընդունումը: Գրանցված ՔՀԿ-ները և ՔՀԿ-ների ցանցերը նույնպես մեծ հաջողություններ ունեցան հանրային քաղաքականության և որոշումների կայացման մեջ՝ ներդրում ունենալու առումով, իսկ ՔՀԿ-կառավարություն համագործակցության մեխանիզմները համեմատաբար ավելի արդյունավետ են դարձել, թեև դեռևս շատ ջանքեր կպահանջվեն այս համագործակցության կատարելագործման համար:

ՔՀԿ օրենսդրության մեջ ակնկալվող փոփոխությունները դեռ տեղի չունեցան, բայց համապատասխան քաղաքականության, հայեցակարգերի քննարկման և ձևակերպման գործընթացում առաջընթաց գրանցվեց: ՔՀԿ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների հայեցակարգը, որն, ինչպես նախատեսվում է, ընդունվելու է 2014թ., ավելի մեծ ճկունության հնարավորություն կտա ՔՀԿ-ների իրավական կարգավիճակի, կառավարման և գրանցման առումներով: Այն նաև թափանցիկության մեխանիզմներ և ֆինանսական աղբյուրների բազմազանեցման ավելի մեծ հնարավորություններ կառաջարկի:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տվյալների, Հայաստանում 2013թ. հոկտեմբերի դրությամբ գրանցված էին 3783 հասարակական կազմակերպություն, 824 հիմնադրամ և 287 իրավաբանական անձանց միություն: Նախորդ տարվա համեմատությամբ աննշան աճ է գրանցվել հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների և մի փոքր նվազում՝ իրավաբանական անձի միությունների թվաքանակում: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ գրանցված կազմակերպությունների միայն 15-20% է ակտիվ գործում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ՝ 3.9



Օրենքը կարգավորում է երկու տեսակի գրանցված ՔՀԿ-ներ՝ անդամակցության վրա հիմնված հասարակական կազմակերպություններ և անդամակցություն չունեցող հիմնադրամներ. երկուսն էլ գրանցվում են ՀՀ արդարադատության նախարարության ներքո գործող իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Պետական ռեգիստրը պարտավոր է գրանցման հայտին պատասխանել քսանմեկ օրվա ընթացքում, սակայն հաճախ լրացուցիչ տեղեկություններ կամ ՔՀԿ կանոնադրության փոփոխություններ են պահանջվում: 2013 թ. ՔՀԿ-ներն արձանագրել են գրանցման գործընթացի վարչարարության որոշակի նվազում: Ակնկալվում էր, որ ՔՀԿ-ների առցանց գրանցման համակարգը հասանելի կլինի 2013թ., սակայն դրա գործարկումը տեխնիկական պատճառներով հետաձգվել է: Ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերը չեն կարգավորվում օրենքով և կարող են ազատ գործունեություն իրականացնել, քանի դեռ ֆինանսական գործարքներ չեն կատարում:

Քաղաքացիական հասարակության զարգացման ցանցի (ՔՀՋՑ) ՔՀԿ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների հայեցակարգը 2013թ. լայնածավալ քննարկումներ անցավ՝ ՔՀԿ-ների հետ համաձայնեցման և նրանց սեփականը դառնալու համար: Հայեցակարգի

ուշադրության կենտրոնում ՔՀԿ-ների իրավական միջավայրի բարելավումն է՝ հասարակական կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության արգելքի վերացման, առցանց գրանցման համակարգի ստեղծման և ՔՀԿ-ների ղեկավարման կառույցի տեսակների ճկունության ավելացման միջոցով: Բացի այդ, հայեցակարգն առաջարկում է կանոնակարգել նպատակային դրամագլխի միջոցով ֆինանսավորման հնարավորությունները, վերանայել ՔՀԿ-ների իրավական ձևերը և թափանցիկության մեխանիզմներ ավելացնել, օրինակ՝ պաշտոնական կայքում նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների ամենամյա հրապարակումը: Նախատեսվում է, որ 2014թ. կառավարությունը կհաստատի հայեցակարգը, որից հետո համապատասխան օրենսդրական նախագծեր կմշակվեն և կներկայացվեն խորհրդարանի օրակարգ:

2013թ. որոշ ոչ ֆորմալ խմբեր ենթարկվել են պետական մարմինների ճնշումների՝ մասնավորապես ոստիկանության կողմից չպատճառաբանված ձերբակալությունների, բռնության և սեռական ոտնձգությունների, ներառյալ բողոքի ակցիաների մասնակիցների նկատմամբ անհատ ոստիկանների կողմից չարտոնված գործողությունները: Բացի այդ, որոշ քաղաքացիական ակտիվիստներ հարձակման ենթարկվեցին քրեական խմբերի կողմից: Ոստիկանությունը ընթացք չտվեց կամ հետևողական չեղավ բազմաթիվ նման հանցավոր արարքների նկատմամբ: Ընդհակառակը, վարչական և քրեական վարույթներ հարուցվեցին մի քանի ցուցարարների դեմ՝ ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար:

Ենթադրաբար քաղաքական դրդապատճառներով հարուցված քրեական գործը Սիվիլիթաս հիմնադրամի հիմնադիր և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Օսկանյանի դեմ 2013 թ. հուլիսին կարճվեց. Օսկանյանը մեղադրվում էր փողերի լվացման մեջ: Սակայն Պետական եկամուտների կոմիտեն շարունակում էր հետաքննել Սիվիլիթաս հիմնադրամը օրինական թույլատրելի շրջանակներից դուրս: Այսպես, եթե օրենքով սահմանվում է, որ հարկային քննությունը պետք է տևի երկու ամսից ոչ ավելի, Սիվիլիթասի դեպքում այն տևել է շատ ավելի երկար:

Հասարակական կազմակերպություններին օրենքով արգելվում է ցանկացած տեսակի ձեռնարկատիրական գործունեության մեջ ուղղակի ներգրավվումը, ներառյալ հանրային գնումները, սակայն հիմնադրամների համար նման արգելք չկա: Կազմակերպության անդամ չհանդիսացող կամավորներին թույլատրվում է ընդգրկել միայն բարեգործական ծրագրերի իրականացման ժամանակ, իսկ ընդհանուր առմամբ կամավորական աշխատանքի համար հասարակական կազմակերպությունները կարող են օգտագործել միայն իրենց անդամների աշխատուժը:

ՔՀԿ-ները կարող են դիմել Պետական մարդասիրական հանձնաժողովին, որպեսզի ԱԱՀ–ից ազատեն այն գնումները, որ կատարում են կառավարության որոշմամբ բարեգործական ճանաչված ծրագրերի շրջանակներում: Տարեկան ավելի քան 58,3 միլիոն ՀՀ դրամ (մոտավորապես 144000 ԱՄՆ դոլար) եկամուտ ունեցող ՔՀԿ-ները պետք է ԱԱՀ վճարեն նույն սկզբունքներով, ինչ առևտրային ընկերությունները□ 2013թ. հարկային հաշվետվությունների ընթացակարգերը բարելավվել են շնորհիվ մի քանի հարկատեսակների միավորման և հետևաբար՝ հաշվարկման գործընթացի պարզեցման: Բացի այդ, տարվա ընթացքում բարելավվել է հարկային վարչարարական մարմինների հետ հաղորդակցությունը:

ՔՀԿ-ները լայնորեն օգտագործում են իրավաբանների փորձառությունը ինչպես առցանց եղանակով՝ սոցիալական լրատվամիջոցների և կայքերի օգնությամբ, այնպես էլ գործընկեր ցանցերի և կոալիցիաների միջոցով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 3.8



2013թ. ընթացքում ՔՀԿ-ները շարունակում էին բարելավել իրենց ինստիտուցիոնալ կարողությունները: Ավելի շատ ՔՀԿ-ներ են ռազմավարական ծրագրեր մշակում՝ հստակ ձևակերպված առաքելությամբ և նպատակներով: Չգրանցված քաղաքացիական խմբերը նույնպես բարելավել են իրենց ռազմավարական մոտեցումները և կարողությունները, մասնավորապես շահերի պաշտպանության և համախոհների համախմբման գործում:

Տարվա ընթացքում ավելի շատ մարզային ՔՀԿ-ներ են զարգացրել իրենց ինստիտուցիոնալ կարողությունները՝ մասնակցելով կարողությունների զարգացման ծրագրերի: Օրինակ, 2013թ. ավելի քան հիսուն ՔՀԿ-ներ դասընթացների են մասնակցել Քաղաքացիական հասարակություն դպրոցում, որը 2004թ. սկսած գործում է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի ներքո, և բազմաթիվ նախաձեռնող խմբեր վերոնշյալ դպրոցի աջակցությամբ գրանցվեցին որպես հասարակական կազմակերպություններ: Տասնինը ՔՀԿ-ներ բարելավեցին իրենց կազմակերպական կարգերը և ընթացակարգերը, ինչպես նաև զարգացրեցին իրենց աշխատակազմի մասնագիտականհմտությունները՝ «Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման» ծրագրի միջոցով, որն իրականացվում է Քաունթերփարթ Ինթերնեշնլ Հայաստանի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ: ՔՀԿ-ները կազմակերպական զարգացման ուղղությամբ նաև ինքնուրույն քայլեր են նախաձեռնում, քանի որ ավելի ու ավելի շատ են գիտակցում իրենց զարգացման կարիքները ու այն մրցակցային միջավայրը, որտեղ նրանք գործում են:

Շահերի պաշտպանության ոլորտում գործող ՔՀԿ-ներն իրենց նախաձեռնությունների համար ակտիվորեն տեղական աջակիցների խմբեր են հավաքագրում: Այնուամենայնիվ, նրանցից քչերն են համակարգված ջանքեր գործադրում այդ խմբերի հետ երկարատև հարաբերությունների կառուցման ուղղությամբ:

ՔՀԿ-ներն իրենց աշխատակիցներին վարձում են հիմնականում ծրագրային կարիքներից ելնելով, քանի որ առանց մշտական ֆինանսավորման նրանք չեն կարողանում լրիվ դրույքով աշխատակիցներ պահել: Շատ ՔՀԿ-ներ շարունակում են հանդես գալ որպես «մեկ մարդու շոու», որտեղ ղեկավարը կազմակերպության միակ ներկայացուցիչն է և կազմակերպչական առումով՝ որոշումների միայնակ կայացնողը: Կազմակերպությունների մեծամասնությունը ըստ կանոնադրության ունի տնօրենների կամ հոգաբարձուների խորհուրդ, բայց հաճախ նրանք կա՛մ խորհրդանշական դեր են կատարում, կա՛մ աշխատում են գործադիր աշխատակազմում: Չգրանցված քաղաքացիական խմբերը ավելի ճկուն կառավարման ոճ և ոչ հիերարխիկ գործառնական կառույցներ ունեն: Այս խմբերն ըստ անհրաժեշտության պլանավորում են իրենց գործունեությունը և սովորաբար մի քանի առաջնորդ ունեն. միաժամանակ նրանք հիմնվում են բացառապես կամավոր սկզբունքով գործող անդամների վրա: Գրանցված ՔՀԿ-ները նույնպես օգտվում են կամավորների՝ մասնավորապես ուսանողների աջակցությունից: ՔՀԿ-ներին կամավորների ներգրավման հնարավորություն է տրվում մի շարք ծրագրերի շրջանակներում,

որոնք իրականացվում են տարբեր կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են ՄԱԿ-ի զարգացման ծրագրերը (ՄԱԶԾ), Հայ կամավորական կորպուսը, Դեպի Հայքը և ԱՄՆ Խաղաղության կորպուսը:

ՔՀԿ-ներն ավելի ու ավելի շատ են օգտագործում նոր տեխնոլոգիաները, այդ թվում՝ սոցիալական կայքերն ու առցանց լրատվամիջոցները, իրենց գործունեությունը հրապարակելու համար, ինչը հատկապես օգնում է մարզային կազմակերպություններին՝ տեղեկատվության տարածման և երկրի մասշտաբով իրենց ոլորտում առկա միտումներից տեղեկացված լինելու առումով: ՔՀԿ-ների մեծ մասն ունի հիմնական գրասենյակային սարքավորումներ և ապահովված է ինտերնետային կապով: Այնուամենայնիվ, դոնորների ֆինանսավորման սահմանափակումները սովորաբար թույլ չեն տալիս ՔՀԿ-ներին նոր սարքավորումներ ձեռք բերել:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ՝ 5.2



ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը 2013թ. չի բարելավվել: Միջազգային դոնորները դեռևս ֆինանսավորման առաջնային աղբյուր են հանդիսանում գրանցված ՔՀԿ-ների մեծամասնության համար: Այս դոնորների շարքում են պետական կառույցները, ինչպիսիք են ԱՄՆ ՄԶԳ-ը, Կանադայի միջազգային զարգացման գործակալությունը, Նորվեգիայի և ԱՄՆ դեսպանատները և Եվրամիությունը: Այլ կազմակերպություններ, ինչպիսիք են Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը, Վորլդ Վիժն Հայաստանը և Օքսֆամ ՄԲ հայաստանյան ներկայացուցչությունը, նույնպես դրամաշնորհներ են տրամադրում ՔՀԿ-ներին՝ քաղաքականության հետ կապված աշխատանքի, զարգացման գործունեության և ծառայությունների մատուցման համար: Դոնորների կողմից տրամադրված դրամաշնորհների ծավալը 2013թ. առանձնապես չի փոխվել:

Չգրանցված ՔՀԿ-ները որոշակի փորձ ունեն տեղական ներդրումների և նյութական ռեսուրսների հավաքագրման գործում, մեծ մասամբ հենց իրենց անդամներից: Միաժամանակ, ՔՀԿ-ների մեծ մասը դժվարանում է ֆինանսավորում հայթայթել տեղական աղբյուրներից, այդ թվում մասնավոր հատվածից և հանրությունից, քանի որ հանրությունը սահմանափակ վստահություն ունի ՔՀԿ-ների հանդեպ, որը մասամբ պայմանավորված է ՔՀԿ-ների անբավարար ֆինանսական թափանցիկությամբ: Շատ ՔՀԿ-ներ նույնիսկ չեն էլ փորձում օգտվել տեղական ռեսուրսներից՝ փոխարենը միայն դրամաշնորհային հնարավորություններ փնտրելով:

Մասնավոր հատվածի ներկայացուցիչները դժվարություններ են արձանագրում բարեգործական նպատակներով գումար նվիրաբերելու գործում՝ կապված հարկերի և հաշվետվությունների վարչարարության հետ: Այն սակավաթիվ ընկերությունները, որոնք կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) քաղաքականություն ունեն, գերադասում են բարեգործական ծրագրեր իրականացնել իրենց ուժերով, թեև այդ գործունեության շրջանակներում նրանք մեծամասամբ համագործակցում են ՔՀԿ-ների հետ: Հայաստանում գործող փոքրաթիվ մասնավոր հիմնադրամները և Սփյուռքի կազմակերպությունները նույնպես ավելի հակված են ուղղակիորեն աշխատել շահառու խմբերի, այլ ոչ թե ՔՀԿ-ների հետ:

Պետության կողմից ՔՀԿ-ների ֆինանսավորումը, ներառյալ նախարարություններից, դատախազությունից, մարզպետարաններից և ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից տրամադրված միջոցներն ավելացել էին դեռևս 2012թ.՝ հասնելով 7 մլրդ դրամի (մոտ 18 մլն ԱՄՆ դոլար). ըստ փորձագետների, պատկերը մոտավորապես նույնն էր նաև 2013թ.: Այնուամենայնիվ, պետական մարմինների մեծ մասը դեռևս ֆինանսավորման հստակ մեխանիզմ չունի, և պետական ֆինանսավորմամբ ծրագրերի համար չկա ընտրության, մոնիտորինգի և գնահատման որևէ ստանդարտ համակարգ: Օրինակ, ՀՀ նախագահի աշխատակազմի գրասենյակը 2012թ. դրամաշնորհներ էր տրամադրել մի շարք ՔՀԿ-ների, բայց որևէ տեղեկություն ստացողների մասին հրապարակված չէր: Ըստ «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ կողմից 2013թ. հրապարակված հետազոտության, սպորտային ֆեդերացիաները և պետության կողմից հիմնած հիմնադրամները 2012թ. ստացել են պետական ֆինանսավորման գերակշռող մասը: Սոցիալական, երիտասարդական, և առողջապահական ծառայություններ տրամադրող ՔՀԿ-ները ևս պետական աջակցության զգալի մասնաբաժին են ստացել:

Շատ քիչ ՔՀԿ-ներ են անդամավճարներ հավաքում, քանի որ դրանք էական եկամուտ չեն ապահովում և լրացուցիչ թղթավարություն են պահանջում հաշվապահական համակարգում: Հասարակական կազմակերպությունները չեն կարող զբաղվել առևտրային գործունեությամբ:

Այն ՔՀԿ-ները, որոնք խոշոր դրամաշնորհային ֆինանսավորում են ստանում, բարելավել են իրենց ֆինանսական կառավարման համակարգերը՝ դոնորների ֆինանսավորման պահանջներին համապատասխանելու նպատակով: Այնուամենայնիվ, քիչ են այն կազմակերպությունները, որոնք բաց տեղեկատվություն են տրամադրում իրենց ֆինանսավորման աղբյուրների և ծախսերի վերաբերյալ: Հիմնադրամները պարտավոր են առցանց հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները: Մինչդեռ հասարակական կազմակերպությունները հազվադեպ են հրապարակում նման հաշվետվություններ, բացառությամբ խոշոր և զարգացած ՔՀԿ-ների, որոնք միջազգային ֆինանսավորում են ստանում:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ 3.3



ՔՀԿ-ների շահերի պաշտպանության կարողությունը 2013 թ. բարելավվել է: Պետականկառույցների հետ ՔՀԿ-ների համագործակցությունն այժմ ավելի ինստիտուցիոնալացված է՝ շնորհիվ հանրային կոլեգիաների (նախարարություններին կից խորհրդատվական մարմիններ, որոնք, որպես կանոն, ներառում են ՔՀԿ-ներ), համատեղ աշխատանքային խմբերի և այլ մարմինների, որոնք ապահովում են տեղեկատվության փոխադարձ հոսքը և ՔՀԿ-ներին հնարավորություն են տալիս մասնակցելու որոշումների կայացման գործընթացին: Միևնույն ժամանակ, այդ կառույցներից ոչ բոլորն են արդյունավետ գործում, և նրանց գործունեությունը կախված է տվյալ պետական մարմնի հայեցողությունից:

2013թ. ոչ ֆորմալ շարժումներն ակտիվ քարոզարշավներ են կազմակերպել, իսկ գրանցված ՔՀԿ-ներն ավելի հաջողակ են եղել օրենսդրական փոփոխությունների խթանման և հանրային քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության գործում: Տարվա առավել ակնառու և

հաջողության հասած քարոզարշավը վերաբերում էր Երևանի քաղաքապետարանի՝ հանրային տրանսպորտի վճարները 50 տոկոսով բարձրացնելու 2013 թ. հուլիսի որոշմանը: Շատերը բոյկոտեցին նոր ուղեվարձը՝ շարունակելով վճարել 100 դրամ: Հանրաճանաչ մարդիկ նույնպես միացան քարոզարշավին՝ անվճար տեղափոխում առաջարկելով ուղևորներին: Հնգօրյա բոյկոտից հետո Երևանի քաղաքապետը համաձայնեց կասեցնել որոշումը: Սակայն տարեվերջին ուղեվարձի ավելացման մասին քննարկումները վերսկսվեցին:

ՔՀԿ-ները շարունակել են համագործակցել Ազգային ժողովի (ԱԺ), կառավարության և տեղական իշխանությունների հետ՝ առաջ քաշելով նոր օրենսդրական նախագծեր և քաղաքականություններ: 2012թ. ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ գործող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագիրը, որն իրականացվում է Քաունթերփարթ Ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակի կողմից, կազմակերպել է «Օրենսդրական օրակարգի քննարկման օրեր»՝ ՔՀԿ-ներին, ակտիվիստներին և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին հնարավորություն տալով օրենսդրական առաջարկներ ներկայացնել առողջապահության, մարդու իրավունքների, սոցիալական խնդիրների և այլ հարցերի վերաբերյալ: 2013թ. ավարտի դրությամբ պետությունը ընդունել էր այս գործընթացի ընթացքում մշակված երեք առաջարկություններ, այդ թվում՝ «Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, լսողական սարքերի ձեռքբերման վերաբերյալ որոշումը և «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի փոփոխությունները, որը վերաբերում է հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց իրավական պաշտպանությանը: 2013թ. «Օրենսդրական օրակարգի քննարկման օրերի» նախաձեռնությունը շարունակեց հարթակ տրամադրել ՔՀԿ-ներին՝ ԱԺ մշտականհանձնաժողովների հետ անմիջական հանդիպումների միջոցով օրենսդրական օրակարգի վրա ազդեցություն ունենալու համար: Առաջարկներ են ներկայացվել երեսունվեց օրենքների վերաբերյալ, որոնցից տասնմեկի համար կատարման պարտավորություններ են ստանձվել:

Հանրային ցանցը, որը հիմնադրվել էր 2008թ.՝ ՔՀԿ-խորհրդարան համագործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմ ապահովելու նպատակով, շարունակում էր տեղեկատվության տարածման և հանրային լսումների կազմակերպման աշխատանքները: Քննարկումներ են իրականացվել առողջապահության բյուջեի, Հայաստանի կայուն զարգացման ծրագրի, զբաղվածության, կրթության և սոցիալական աջակցության մասին օրենսդրական նախագծերի վերաբերյալ: Արդյունքում ստացած առաջարկները ուղարկվել են պետական մարմիններին, որոնք հիմնականում համաձայնել են հաշվի առնել այդ առաջարկությունները:

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի (ԱլԳ ՔՀՖ) Հայաստանի ազգային պլատֆորմը պետական պաշտոնյաների հետ անմիջական երկխոսություն նախաձեռնեց՝ տեղեկատվության փոխանակման և տարատեսակ հարցերի շուրջ քննարկումների կազմակերպման նպատակով: Այս երկխոսության արդյունքում 2013թ. ՔՀՖ արդյունավետ իրականացրեց Արևելյան գործընկերության ճանապարհային քարտեզի մոնիթորինգը, ինչպես նաև պետական բյուջեում Եվրամիության կողմից հատկացված ֆինանսավորման օգտագործման ուսումնասիրությունը:

2013թ. իրենց աշխատանքը շարունակեցին ՔՀԿ-ների և կառավարության ներկայացուցիչներ ընդգրկող մի շարք աշխատանքային խմբեր: Այսպես, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակեց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ օրենսդրական նախագիծ՝ սերտորեն համագործակցելով հաշմանդամության ոլորտում գործող ՔՀԿ-ների ցանցի հետ:

Կառավարությունը և խորհրդարանը ՔՀԿ-ների կողմից առաջարկված տասնյակ որոշումներ և օրենսդրական նախագծեր են քննարկել և հաստատել: Օրինակ, «Վստահություն» ՀԿ-ն, երկրի մի շարք մանկաբույժների հետ քննարկումների արդյունքում և ՀՀ առողջապահության նախարարության համագործակցությամբ առաջարկներ էր մշակել՝ երեխաների առողջության ստանդարտների վերանայման վերաբերյալ: Առողջապահության նախարարությունը ընդունեց այս առաջարկները և ուղարկեց Արդարադատության նախարարության հաստատմանը:

Տեղական իշխանությունների հետ համագործակցությունը ևս բարելավվել է: «Նոր Սերունդ» ՀԿ-ն աշխատանքներ տարավ Գյումրիի, Արթիկի, Մարալիկի երիտասարդական խմբերի հետ՝ համայնքային մակարդակով երիտասարդական քաղաքականության իրականացման ռազմավարական ծրագրերի մշակման նպատակով: Համայնքապետարանները հաստատեցին այդ ծրագրերը, իսկ Մարալիկում առաջին անգամ որոշվեց տարեկան 100 հազար դրամ (մոտ 250 ԱՄՆ դոլար) հատկացնել համայնքային բյուջեից՝ որևէ երիտասարդական միջոցառման համար: Բազմաթիվ համայնքային ցանցեր քննարկումներ են կազմակերպում տեղական խմբերի և տեղական ու պետական իշխանությունների հետ: Միաժամանակ, շահերի պաշտպանության քարոզարշավների մեծ մասն իրականացվում է Երևանում, իսկ հեռավոր համայնքներում և գյուղական վայրերում ՔՀԿ-ներն ու անհատները հազվադեպ են քարոզարշավներ իրականացնում:

ՔՀԿ-ներն ակտիվորեն ներգրավվեցին 2013թ. նախագահական և Երևանի ավագանու ընտրությունների մոնիթորինգի, իրազեկման բարձրացման և տեղեկատվության տարածման աշխատանքներում: Օրինակ, Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ չորս ՔՀԿ-ներ մի քանի անհատների հետ միասին ստեղծեցին «Քաղաքացի դիտորդ» կոալիցիան՝ ընտրական գործընթացին հետևելու և ընտրակեղծիքների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելու նպատակով:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ՝ 3.9



ՔՀԿ-ները ծառայությունների լայն շրջանակ են տրամադրում, ներառյալ իրավական, սոցիալական և բժշկական աջակցություն խոցելի խմբերին, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթություն, կարողությունների զարգացում, առցանց լրատվություն և հետազոտություններ:

Որպես կանոն, ՔՀԿ-ներն արձագանքում են համայնքային կարիքներին՝ հաճախ բացահայտելով դրանք համայնքային ժողովների ընթացքում, սակայն նրանց արձագանքի օպերատիվությունն ու արդյունավետության աստիճանը տարբեր է՝ կախված կազմակերպության կարողություններից:

Ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների ուշադրության կենտրոնում հաճախ կոնկրետ սոցիալական խմբեր են, ինչպես օրինակ կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները, երեխաները, ազգային փոքրամասնությունները և այլ խոցելի խմբեր: Մի քանի ՔՀԿ-ներ, հիմնականում մասնագիտական ընկերակցություններն ու սպորտային ֆեդերացիաները, ծառայություններ են մատուցում միայն իրենց անդամների համար: ՔՀԿ-ների մեծամասնությունը, սակայն, իրենց ծառայությունները առաջարկում են մարդկանց ավելի մեծաքանակ շրջանակի՝ լայն

հանրությանը տրամադրելով տեղեկատվական, կրթական և խորհրդատվական ծառայություններ: Ավելի փորձառու և պրոֆեսիոնալ ՔՀԿ-ները, մասնավորապես թինկ-թանկերը և գիտավերլուծական կազմակերպությունները, զեկույցներ և վերլուծություններ են հրապարակում և ներկայացնում այլ ՔՀԿ-ների, գիտական հանրության և պետական կառույցների ուշադրությանը:

Սակավաթիվ ՔՀԿ-ներ գործարկում են սոցիալական ձեռնարկություններ, որոնք թույլ են տալիս հոգալ որոշակի ծախսեր և զբաղվածություն ապահովել իրենց շահառուների համար: Արմավիրի զարգացման կենտրոնի հիմնած՝ գրենական պիտույքների խանութը 2013թ. սկսեց շահույթ ապահովել՝ հնարավորություն տալով կազմակերպությանը հոգալ գրասենյակային ծախսերի մի մասը: Կարողությունների զարգացման նախաձեռնությունները և ՔՀԿ օրենքի ակնկալվող փոփոխությունները կնպաստեն ՔՀԿ ծախսածածկման բարելավմանը:

Պետական կառույցները շարունակում են սահմանափակ թվով սուբսիդիաներ և դրամաշնորհներ տրամադրել առանձին ՔՀԿ-ներին՝ սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահական ծառայությունների համար: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն, որը պետական ֆինանսավորման ամենամեծ ծավալները ստացող ՀԿ-ներից է, շարունակում է սուբսիդավորվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ տարեցների սոցիալական և բժշկական խնամքի տրամադրման համար: «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամը, որը հիմնվել է ՀՀ նախագահի և վարչապետի կողմից, կառավարում է արտերկրում հայ ուսանողների կրթության աջակցության նպատակով տրամադրված պետական ֆոնդերը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ՝ 3.4



2013թ. ընթացքում ՔՀԿ-ներին շարունակում էին աջակցություն տրամադրել ՔՀԿ ռեսուրս կենտրոնները և միջանկյալ ծառայություն մատուցող կազմակերպությունները (ԾՄԿ), որոնք տեղակայված են Երևանում և Հայաստանի մյուս քաղաքներում: Այս կենտրոնները դրամաշնորհներ, դասընթացներ և խորհրդատվություն են տրամադրում, ներառյալ նոր մեդիա գործիքների կիրառման ոլորտում կարողությունների զարգացում: «Ինֆոտուն» տեղեկատվական ռեսուրս կենտրոնները շարունակում էին դասընթացներ, սեմինարներ կազմակերպել և տեղեկատվություն ու ինտերնետային ռեսուրսներ տրամադրել մարզային համայնքների, հատկապես երիտասարդների համար: Մի քանի տեղական դրամաշնորհատու կազմակերպություններ ֆինանսական միջոցներ են տրամադրել այլ տեղական կազմակերպություններին որպես ենթադրամաշնորհներ:

ՔՀԿ-ների համար վերապատրաստման դասընթացներ են իրականացվում ամբողջ երկրի տարածքում, առաջին հերթին դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ: Միաժամանակ, սակավաթիվ են այն ՔՀԿ-ները, որոնք հնարավորություն ունեն մասնակցելու վճարովի դասընթացներին: Վերապատրաստման հնարավորությունները դեռևս չեն բավարարում աջակցության պահանջարկին, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպես ծրագրի առաջարկի շարադրումը, ֆոնդահայթայթումը, պրոֆեսիոնալ զեկույցների մշակումը, համախոհների համախմբումը և արդյունավետ հանրային կապերի ու հաղորդակցության համակարգերի կառավարումը:

2013թ. ակտիվ էին կոնկրետ խնդրի շուրջ ստեղծված բազմաթիվ կոալիցիաները: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որը կազմավորվել էր 2010թ., ստորագրահավաքներ, պիկետներ և ցույցեր է կազմակերպել՝ Հայաստանում ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման պահանջով: Ընտրությունների շուրջ ձևավորված կոալիցիաները նպատակ ունեին ռեսուրսները միավորելով արդյունավետ դիտորդական ու իրազեկման գործունեություն ապահովել ողջ երկրով մեկ: «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը, որն իրավապաշտպան ՔՀԿ-ների և ակտիվիստների կոալիցիա է, տարվա ընթացքում հրապարակեց մի շարք հայտարարություններ և կազմակերպեց բազմաթիվ քննարկումներ, ներառյալ Եվրասիական մաքսային միությանը միանալու Հայաստանի որոշման հանրային քննարկումը: ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմը, որը բաղկացած է 188 ՔՀԿ-ներից, 2013թ. իր քարտուղարությունը գրանցեց որպես իրավական անձանց միություն, զարգացրեց իր ինստիտուցիոնալ համակարգերը և մեխանիզմները՝ դրսից ստեղծված մի կառույցից դառնալով տեղական ցանց: Պլատֆորմը իրականացրեց ընտրությունների մոնիթորինգ և Եվրամիության և Արևելյան գործընկերության երկրների պլատֆորմների ներկայացուցիչների կողմից մշակված համատեղ զեկույց հրապարակեց:

Առևտրային ընկերությունների և ՔՀԿ-ների միջև գործընկերությունը աստիճանաբար բարելավվում է: Օրանժ Հայաստանը, օրինակ, ՔՀԿ-ների հետ համագործակցեց առողջապահության, կրթության և խոցելի համայնքների երեխաների աջակցության մի շարք նախաձեռնություններում: ՔՀԿ-ները, մասնավորապես մարզերում, ակտիվորեն համագործակցում են լրատվամիջոցների հետ՝ տեղեկատվության տարածման և շահերի պաշտպանության քարոզարշավների աջակցության նպատակով:

ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ՝ 4.0



Հայաստանի ՔՀԿ-ները հակասական են ընկալվում իշխանությունների կողմից: Պետական մարմինները հիմնականում դրական դիրքորոշում ունեն ՔՀԿ սեկտորի վերաբերյալ որպես այդպիսին, իսկ որոշ կառույցներ երկարաժամկետ գործընկերություն են հաստատել համապատասխան ոլորտներում փորձագիտություն ունեցող ՔՀԿ-ների հետ: Այնուամենայնիվ, կա նաև բացասական վերաբերմունք, մասնավորապես այն ՔՀԿ-ների և քաղաքացիների նկատմամբ, որոնք ընդդիմանում են պետական որոշումներին և բողոքի ակցիաներ նախաձեռնում: Պետական պաշտոնյաները և իշխանամետ խմբերը իրավապաշտպան և վերահսկող կազմակերպություններին երբեմն պիտակավորում են որպես «գրանտակեր»՝ նրանց վարկաբեկելու նպատակով:

2013թ. «Կովկասյան բարոմետր» հետազոտության արդյունքների համաձայն, հանրության միայն 3 տոկոսն է ամբողջովին վստահում ՔՀԿ-ներին, իսկ 15 տոկոսը մասամբ է վստահում: Միաժամանակ, մարդկանց 34 տոկոսը ոչ վստահում են, ոչ էլ չեն վստահում ՔՀԿ-ներին, իսկ 36 տոկոսը մասամբ կամ բացարձակապես չեն վստահում նրանց: Ընդ որում, 2012թ. տվյալների համեմատ վստահության աննշան նվազում կա:

Պետական վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցների կողմից ՔՀԿ-ների վերաբերյալ հակաքարոզչությունը վնասում է ՔՀԿ-ների հանրային ընկալմանը: Ծառայություն մատուցող ՔՀԿ-ներն առավելապես դրական լույսի ներքո են լուսաբանվում, մինչդեռ շահերի պաշտպանությամբ և վերահսկմամբ (watchdog) զբաղվող ՔՀԿ-ները բացասական որակավորումներ են ստանում: Տարբեր խմբավորումներ ևս պառակտող հայտարարություններ են հրապարակում և բողոքի ակցիաներ կազմակերպում շահերի պաշտպանությամբ, մարդու իրավունքներով և գենդերային հարցերով զբաղվող ՔՀԿ-ների դեմ: Այսպես, «Ստոպ Գենդեր Հայաստան» նախաձեռնությունը հանդես էր գալիս գենդերային հավասարության օրենքի դեմ, որն ընդունվել էր 2013թ. հունիսին, փաստարկելով, որ գենդերային հավասարությունը խթանում է համասեռականությունը, ինցեստը և քայքայում է ընտանեկան արժեքները: Բազմաթիվ հասարակական գործիչներ գտնում են, որ պետական իշխանությունները պատասխանատու են նմանատիպ հարձակումներն ու քարոզչությունը բորբոքելու կամ թույլատրելու համար:

Ազգային լրատվամիջոցները ընդհանուր առմամբ քիչ են անդրադառնում ՔՀԿ գործունեությանն ու միջոցառումներին, և լուսաբանումը սովորաբար կախված է նրանից, թե արդյոք միջացառմանը մասնակցում են հանրաճանաչ մարդիկ կամ պետական պաշտոնյաներ: Միաժամանակ, քանի որ չգրանցված խմբերը հասցեագրում էին լայն խմբերի առաջնային շահերը, նրանց գործունեությունն ավելի մեծ լուսաբանում ստացավ 2013թ., հատկապես առցանց լրատվամիջոցներում: Օրինակ, Երևանի տրանսպորտային ուղեվարձի բարձրացման դեմ կամ մաքսային միությանը միանալու որոշման դեմ հանդես եկող շարժումներն ավելի մեծ ուշադրության արժանացան լրատվամիջոցների կողմից, քան գրանցված ՔՀԿ-ները: Մարզային լրատվամիջոցներն ավելի ակտիվ են ՔՀԿ-ների միջոցառումների լուսաբանման գործում:

Բիզնես ընկերությունների համագործակցությունը ՔՀԿ սեկտորի հետ սահմանափակ է: Այն ընկերությունները, որոնք իրենց սկզբունքներում որդեգրել են բարեգործությունն ու ԿՍՊ գործունեությունը, համագործակցում են առավել պրոֆեսիոնալ և ունակ ՔՀԿ-ների հետ: Միաժամանակ, առևտրային ընկերությունները գտնում են, որ շատ ՔՀԿ-ներ պատրաստ չեն նրանց հետ հաղորդակցվելու և ավելի շատ մտածում են ֆինանսավորման հայթայթման, քան առաքելության իրականացման մասին:

Ընդհանուր առմամբ, ՔՀԿ հատվածի արտաքին հաղորդակցությունը անբավարար է: Բազմաթիվ ՔՀԿ-ներ սերտ կապված են իրենց համայնքի հետ, բայց քիչ ջանք են գործադրում իրենց աշխատանքի հրապարակայնացման ուղղությամբ: Մեծ մասը կանոնավոր հանրային կապերի գործունեության համար ռեսուրսներ կամ կարողություններ չունի: Այնուամենայնիվ, որոշ ՔՀԿ-ներ աշխատում են հրապարակային դարձնել իրենց աշխատանքը և համագործակցել լրատվամիջոցների հետ: Բացի այդ, ավելի շատ ՔՀԿ-ներ են սկսել օգտագործել էլեկտրոնային հաղորդակցության և առցանց համագործակցության գործիքները:

Սակավաթիվ ՔՀԿ-ներ են թափանցիկ իրենց գործունեության մեջ, որը բացասաբար է անդրադառնում հատվածի վարկանիշի վրա: Հայաստանում ՔՀԿ-ների կողմից ընդունված էթիկայի համընդհանուր կանոններ չկան, թեև առանձին կազմակերպություններ մշակել են վարվելակերպի իրենց սեփական կանոնները: Հատուկենտ ՔՀԿ-ներ տպագիր տեսքով և/կամ իրենց վեբկայքում հրապարակում են իրենց տարեկան զեկույցները՝ ներառյալ ծրագրային և ֆինանսական տեղեկատվությունը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը (ՔՀԿԿԻ) վերլուծական մի գործիք է, որը չափում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի քաղաքացիական հասարակության սեկտորի առաջընթացը: Ինդեքսը հետևում է քսանինը երկրներում վերջին տասնհինգ տարվա ընթացքում առկա՝ քաղաքացիական սեկտորի առաջընթացին: Ինդեքսն ուսումնասիրում է քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայրը՝ մասնավորապես իրավական միջավայրը, կազմակերպական կարողությունները, ֆինանսական կայունությունը, շահերի պաշտպանությունը, ծառայությունների մատուցումը, ենթակառուցվածքները և հանրային ընկալումը: Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է յոթ նիշանոց սանդղակով, որտեղ 1–ը շատ առաջադեմ մակարդակն է նշանավորում, իսկ 7–ը՝ զարգացման ցածր մակարդակ: Ինդեքսը մշակվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից՝ յուրաքանչյուր երկրում տեղական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի հետ՝ cdpf@cdpf.am հասցեով:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2013թ. ՔՀԿ կայունության ինդեքսի անգլերեն տարբերակը կարող եք գտնել հետևյալ հասցեով. http://www.usaid.gov/europe-eurasia-civil-society: